

Կ-1144-29.08.2025-ՖՎ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի՝

1) 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Պետության եւ համայնքների համար պարտավորություններ (այդ թվում՝ պայմանական պարտավորություններ) առաջացնող պայմանագրերը (համաձայնագրերը) եւ այդ պայմանագրերում (համաձայնագրերում) իրականացվող փոփոխությունները եւ լրացումները ենթակա են պարտադիր գրանցման պետական լիազորված մարմնում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին եւ 12.2-րդ մասերով.

«12.1. Պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրերը (համաձայնագրերը) եւ դրանցում կատարվող փոփոխությունները եւ լրացումները ենթակա են նախնական գնահատման պետական լիազորված մարմնի կողմից եւ կարող են կնքվել պետական լիազորված մարմնի նախնական գնահատման առկայության դեպքում: Սույն մասի պահանջը չի տարածվում գնումները կարգավորող օրենսդրության համաձայն պետական լիազորված մարմնում հաշվառվող, ինչպես նաեւ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով սահմանված կարգով պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագրերի տվյալների բազայում ներառվող պայմանագրերի վրա:

12.2. Պետության եւ համայնքների համար պարտավորություններ (այդ թվում՝ պայմանական պարտավորություններ) առաջացնող՝ սույն հոդվածի 12-րդ մասում նշված պայմանագրերի (համաձայնագրերի) եւ դրանց փոփոխությունների եւ լրացումների գրանցման, ինչպես նաեւ պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրերի (համաձայնագրերի) եւ դրանցում կատարվող փոփոխությունների եւ լրացումների նախնական գնահատման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 15¹-ին հոդվածի 1-ին մասում՝

1) «երկու» բառը փոխարինել «երեք» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետով.

«գ) վերլուծությունների մաս:»:

Հոդված 3. Օրենքի 15¹-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ եւ 5-րդ մասերով.

«4. Վերլուծությունների մասում ներկայացվում են պետական լիազորված մարմնի, այդ թվում՝ այլ մարմինների հետ համատեղ մշակված վերլուծությունները, որոնք առնչություն ունեն միջնաժամկետ ծախսերի ծրագրին: Վերլուծությունների մասում պարտադիր ներառվում է հարկաբյուջետային հատուկ դիսկերի (ներառյալ պետական եւ համայնքային մասնակցությամբ ընկերությունների, ՊՄԳ ծրագրերի (բացառությամբ՝ օրենքով հրապարակման ոչ ենթակա), բյուջետային վարկերի եւ երաշխիքների) վերաբերյալ տեղեկատվությունը, որը մշակվում է պետական լիազորված մարմնի եւ համապատասխան պետական մարմինների կողմից համատեղ: Վերլուծությունների մասում ներառվում է նաև Կենտրոնական բանկին տրամադրված անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակների վերաբերյալ տեղեկատվությունը:

5. Պետական լիազորված մարմնի եւ պետական մարմինների՝ հարկաբյուջետային հատուկ դիսկերի վերաբերյալ տեղեկատվության համատեղ մշակման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետում «- ճշգրտված տեղեկատվություն՝ հիմնական հարկաբյուջետային դիսկերի եւ դրանց հավանականության վերաբերյալ (բարձր, միջին, ցածր).» բառերը փոխարինել

«- ճշգրտված տեղեկատվություն՝ հիմնական հարկաբյուջետային դիսկերի եւ դրանց հավանականության (բարձր, միջին, ցածր) եւ հարկաբյուջետային հատուկ դիսկերի (այդ թվում՝ նախորդող ժամանակահատվածում տվյալ դիսկերի նյութականացման դեպքերի նկարագրության) վերաբերյալ.» բառերով:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «թ1» կետով.

«թ1) «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով սահմանված ՊՄԳ պայմանագրերի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը վճարվող վնասի հատուցումներ, տույժեր (տոկոսներ), փոխհատուցումներ, կոնցեսիոն եւ այլ վճարներ:»:

Հոդված 6. Օրենքի 28²-րդ հոդվածի 1.2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ե» կետ.

«ե) «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով սահմանված ՊՄԳ պայմանագրերի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը վճարվող վնասի հատուցումներ, տույժեր (տոկոսներ), փոխհատուցումներ, կոնցեսիոն եւ այլ վճարներ:»:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

**ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ**

Կ-1144-29.08.2025-ՖՎ-011/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի՝

1) 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Պետության եւ համայնքների համար պարտավորություններ (այդ թվում՝ պայմանական պարտավորություններ) առաջացնող պայմանագրերը (համաձայնագրերը) եւ այդ պայմանագրերում (համաձայնագրերում) իրականացվող փոփոխությունները եւ լրացումները ենթակա են պարտադիր գրանցման պետական լիազորված մարմնում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-~~ին~~ և 12.2-րդ մասերով.

«12.1. Պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրերը (համաձայնագրերը) եւ դրանցում կատարվող փոփոխությունները եւ լրացումները ենթակա են նախնական գնահատման պետական լիազորված մարմնի կողմից եւ կարող են կնքվել պետական լիազորված մարմնի նախնական գնահատման առկայության դեպքում: Սույն մասի պահանջը չի տարածվում գնումները կարգավորող օրենսդրության համաձայն պետական լիազորված մարմնում հաշվառվող, ինչպես նաեւ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով սահմանված կարգով պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագրերի տվյալների բազայում ներառվող պայմանագրերի վրա:

12.2. Պետության եւ համայնքների համար պարտավորություններ (այդ թվում՝ պայմանական պարտավորություններ) առաջացնող՝ սույն հոդվածի 12-րդ մասում նշված պայմանագրերի (համաձայնագրերի) եւ դրանց փոփոխությունների եւ լրացումների գրանցման, ինչպես նաեւ պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրերի (համաձայնագրերի) եւ դրանցում կատարվող փոփոխությունների եւ լրացումների նախնական գնահատման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 15¹-~~ին~~ հոդվածի 1-ին մասում՝

1) «երկու» բառը փոխարինել «երեք» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետով.

«գ) վերլուծությունների մաս:»:

Հոդված 3. Օրենքի 15¹-~~ին~~ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ եւ 5-րդ մասերով.

«4. Վերլուծությունների մասում ներկայացվում են պետական լիազորված մարմնի, այդ թվում՝ այլ մարմինների հետ համատեղ մշակված վերլուծությունները, որոնք առնչություն ունեն միջնաժամկետ ծախսերի ծրագրին: Վերլուծությունների մասում պարտադիր ներառվում է հարկաբյուջետային հատուկ դիսկերի (ներառյալ պետական եւ համայնքային մասնակցությամբ ընկերությունների, ՊՄԳ ծրագրերի (բացառությամբ՝ օրենքով հրապարակման ոչ ենթակա), բյուջետային վարկերի եւ երաշխիքների) վերաբերյալ տեղեկատվությունը, որը մշակվում է պետական լիազորված մարմնի եւ համապատասխան պետական մարմինների կողմից համատեղ: Վերլուծությունների մասում ներառվում է նաև Կենտրոնական բանկին տրամադրված անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակների վերաբերյալ տեղեկատվությունը:

5. Պետական լիազորված մարմնի եւ պետական մարմինների՝ հարկաբյուջետային հատուկ դիսկերի վերաբերյալ տեղեկատվության համատեղ մշակման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետում «- ճշգրտված տեղեկատվություն՝ հիմնական հարկաբյուջետային դիսկերի եւ դրանց հավանականության վերաբերյալ (բարձր, միջին, ցածր).» բառերը փոխարինել

«- ճշգրտված տեղեկատվություն՝ հիմնական հարկաբյուջետային դիսկերի եւ դրանց հավանականության (բարձր, միջին, ցածր) եւ հարկաբյուջետային հատուկ դիսկերի (այդ թվում՝ նախորդող ժամանակահատվածում տվյալ դիսկերի նյութականացման դեպքերի նկարագրության) վերաբերյալ.» բառերով:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «թ1» կետով.

«թ1) «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով սահմանված ՊՄԳ պայմանագրերի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը վճարվող վնասի հատուցումներ, տույժեր (տոկոսներ), փոխհատուցումներ, կոնցեսիոն եւ այլ վճարներ:»:

Հոդված 6. Օրենքի 28²-րդ հոդվածի 1.2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ե» կետ.

«ե) «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով սահմանված ՊՄԳ պայմանագրերի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը վճարվող վնասի հատուցումներ, տույժեր (տոկոսներ), փոխհատուցումներ, կոնցեսիոն եւ այլ վճարներ:»:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1144-29.08.2025-ՖՎ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Nº	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	1-ին հոդված	Առաջարկում ենք շտկել Նախագծում առկա վրիպակները, մասնավորապես՝ Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածում լրացվող նոր՝ 12.1-ին և 12.2-րդ մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջին, այն է՝ մասի համարը տեքստից անջատել միջակետով, բացի այդ՝ անհրաժեշտ է քննարկվող հոդվածում նշված «12.1-րդ» ձևակերպումը փոխարինել «12.1-ին» ձևակերպմամբ՝ հոռմեական թվականների ճիշտ գրելաձևն ապահովելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	2-րդ և 3-րդ հոդվածներ	Առաջարկում ենք Նախագծի ողջ տեքստում առկա «15¹-րդ» ձևակերպումները փոխարինել «15¹-ին» ձևակերպումներով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	3-րդ հոդված	Հաշվի առնելով շահագրգիռ կողմերի միջև տեղի ունեցած մասնագիտական քննարկման արդյունքները՝ առաջարկում ենք միջնաժամկետ ծախսերի ծրագրի «Վերլուծություններ» մասում ներառել նաև Կենտրոնական բանկին տրամադրված անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակների վերաբերյալ տեղեկատվությունը՝ վերջիններիս վերաբերյալ	Ընդունվել է	Ընդունվել է

			տեղեկատվության թափանցիկությունը ապահովելու նպատակով: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ նախագծի 3-րդ հոդվածում՝ Օրենքի 15^{-ի}ն հոդվածում լրացվող նոր 4-րդ մասում առաջարկում ենք լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Վերլուծությունների մասում ներառվում է նաև Կենտրոնական բանկին տրամադրված անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակների վերաբերյալ տեղեկատվությունը:»:		
--	--	--	--	--	--